նպատակով էր պատրաստած, որքան նրան տանջելու նպատակով: Շապիկներն անգամ կարոած էին թանձր մազեղէնից, որ հագած ունէին մերկ մարմնի վրայ եւ խարտոցի նման մաշում էին նրան: Առհասարակ բոված ղահոէի մուգ գոյնը տիրում էր բոլոր հագուստների վրայ: Գլխներին դրած ունէին արախչինի նման բրդեայ թասակ, որի վրայ փաթաթել էին սեւ թաշկինակ: Այդ տեսակ գլխարկները անապատականների լեզոով կոչւում էին «քուսիթաէ, որի ասորական նշանակութիւնը ցոյց է տալիս, որ ամենահին ժամանակներում գլխարկի այդ ձեւն առնոած էր ասորիներից, երբ նրանց կղերը մեծ դեր էր խաղում մեր եկեղեցական կեանքում: Վանահօր զգեստը թէ՛ իր գոյնով եւ թէ՛ իր ձեւով չէր որոշւում միւսներից: Բոլորը հագած ունէին ծանր հողաթափներ, երեք մատնաչափ հաստ փայտեայ տակերով:

Բայց ինչ որ աւելի աչքի էր զարկում, այդ էր չափազանց կեղտոտութիւնը, որը տիրում էր բոլորի վրայ: Երեւում էր, որ այդ մարդիկը այն աստիճան արհամարհում էին մարմինը, որ բոլորովին անփոյթ էին՝ նրանք փոքր ի շատէ մաքուր դրութեան մէջ պահելու: Եւ ես հաւատացած էի, որ դրանք, երբեք չէին լոացւում, երբեք չէին սանդրոամ: Բոլորի մազերը անկարգ կերպով խճճոած էին երեսների եւ գլխների վրայ, եւ այդ խելագարների տպաւորութիւն էր գործում:

Ճաշը վերջացաւ նոյնպէս աղօթքով, որպէս սկսոեցաւ: Բոլորը վերկացան, խոնարհութեամբ գլուխ տոին վանահօրը եւ լուռ, դանդաղ քայլերով դուրս եկան սեղանատնից, դիմեցին դէպի իրանց խուցերը: Այնտեղ նրանք ուրիշ հանգստութիւն չունէին. պէտք է մխիթարութիւն գտնէին «սաղմոս քաղելու» մէջ եւ սպասէին երեկոյեան ժամերգութեանը: Զբօսանքներ արգելոած էին նրանց:

Երբ մենք վանահօր հետ միայնակ մնացինք, նա դարձաւ դէպի Ասլանը այդ խօսքերով.

— Ես կարդացի նորին սրբազնութեան թուղթը, պարոն բժշկապետ, ձեր նպատակը շատ գովելի է, եւ ես ամենայն յօժարութեամբ պատրաստ կը լինէի ձեր փափագներին բաւականութիւն տալ, եթէ մեր վանքում գտնոէին ձեր ցանկացած ձեռագրերը:

— Շատ շնորհակալ եմ, հայր սուրբ, ձեր բարեսրտութեան համար, — պատասխանեց Ասլանը, — դուք ինձ շատ կը պարտաւորէիք, եթէ տայիք ինձ կարդալու գրքերի ցուցակը. ես հայերէն կարդալ իմանում եմ:

— Ցուցակ չունենք, պարոն բժշկապետ, քանի անգամ մտածել ենք այդ մասին, բայց ժամանակ չենք գտել կազմելու: